

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

*Կարճագրություն Սեդուկտիվ*  
*182 Երբեք չէ*

# ՎՐԷԺԻ ԱՒԵՏԱՐԱՆ



Գիրք Ա.  
1916-1917

1918  
ԱՐՄԵՆԻԱ ՏՊԱՐԱՆ  
Տպագրիչ-Հրատարակիչ  
217 Խաբ 26-րդ Փողոց, Նիւ Երբ

ՑԳԼ. ԳԳ

G-16



891.99

G-16

891.99  
7 JUL 2011  
632.2

1/0

87

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

# ՎՐԷԺԻ ԱՒԵՏԱՐԱՆ



Գիրք Ա.  
1916-1917

1918  
ԱՐՄԵՆԻԱ ՏՊԱՐԱՆ  
Տպագրիչ-Հրատարակիչ  
217 Իսր 26-րդ Փողոց, Նիւ Եորք



104  
SHAHAN NATALIE

# GOSPEL OF REVENGE



BOOK I  
1916-1917

1918  
ARMENIA PRESS  
Printers and Publishers  
217 East 26th Street, New York, N. Y.



45611

10.07.2013

ՆԻԷՐԻ ԽՕՍԲ

ՎՐԷԺԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՍ չորս գիրքերը, որոնց առաջինը հրապարակ կը հանեմ, նւէր մըն է արիւնագիր ներկայ ու գալիք հայութեան, հայութեան այն մարտիկ գաւակներուն, որոնք գացին ու դեռ պիտի երթան Վրէժի ձեռքով ողջ հայութեան գլուխին մաղած նախատիւնները ջնջել :

Բանաստեղծութիւն չէ որ կուտամ հանրութեան, այլ արիւնագիր դրագներ, որոնք արձանագրած են պատմութեան մէջ ու ես գրիչս քաթխած Հայկական Տեղահանութեան պատմութեան յանձնարարիք արիւնին մէջ՝ կ'ոգեկոչեմ հայ կրնութեան խելառած պարկեշտութիւնը, որ այսօր ու դարեր պիտի գարնէ սիրտ ու խիղճ ուրացող հայ հերոսներու խելառ վրէժխնդրութեան դուռերը...

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

2620-2011





«Այսֆան չարիք քէ մոռանան մեր որդիք,  
Թող ողջ աշխարհ հային կարդայ նախատիւն :»

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ





ԱՇԻԱՄ սիրտ մը մանուկի — ողջ սե-  
րունդը հայութեան —  
Ատամներէն առկախած հայ մայրութեան  
խելագար,  
Զուլումովն հայ աշխարհին սքար—աշ-  
խարհի փոքորկէ,  
—Ո՛հ, լսեցէ՛ք, հայ մայրը իր հայ գաւակը կ'ու-  
տէ...

\*  
\* \*

Զուլում, գուլում գիշեր մը իջաւ գլխին հայ գիւ-  
ղին.

Ամէն առի՛ք մահով մըն էր սգաւոր.  
Բուխերիկներն հայ Երկրին մահ ու սուգ կը մը-  
խային,

Հայ կռուակներ լաց ու ողբով կուրացան.  
Ու սեւ օձերն հայ արիւնի գուարշիէն խեղդւեցան...

Ալլահը տօն էր սարքեր, տօն արիւնի, աւերի,  
Հայ աշխարհը մեհեան էր, գիւղերը՝ ջահ ու կերոն.  
Մերկ դիակներ հայ կոյսի, ծերուկի ու պառաւի  
Զոհեր արնոտ Ալլահին.



Ու շուրջն անոնց կը դատնար դիւային պարը թուր-  
ֆի...  
Ալլահը տօն էր սարֆեր, ջալիանֆ կարմիր աւերի...

\*  
\* \*

Հայ մայր մը դեռ գիւղին մէջ, սեւ առիֆի մը տակ  
լոին, մահաբոյն,  
Իր գոյգ գառներն եօթնօրեայ—գիւղին ֆէտերը վա-  
ղի—  
Կուրծֆին սեղմած, կը սգար  
Իր ջիւանին յօշոշ դիակը անքաղ,  
Որ ծունկին վրայ, ա՛խ, թրֆուքեան եաթաղանը  
մորթոտեր էր, փոդոտեր...

Վերջինն էր ան այդ սեւ գիւղի հարսերուն,  
Ջուլումնահար հայ մայրութեան նշանակն,  
Որ կը սգար սուգը իր ջան—ջիւանին,  
Որ կը նար որբութիւնն իր գառներուն...  
Բայց, ո՛վ գուլումն Հայ երկրին...  
Ուր հայ մայրի սուգը անգամ ռնիր է...

Ու հայ կեանքի այդ առկայծուն նշոյլէն թուրֆ մո-  
լուցքը դիւահար՝  
Դժոխօրէն որոտաց...  
«Կեանքի հա՛րս, անհաւատ շու՛ն,  
Դեռ հայ շու՞նչ կայ Ալլահի տօնը պղծող,  
Դեռ լալու չսի գագսո՞ւմ կայ կուրծֆիդ տակ...»

Ու ձայնն թուրֆին դժոխօրէն հրամայեց  
Օջախ շտկել, կրակ վառել, կաթսան ջուրով լեցը-  
նել...

Ջիւան մարդին դիակն պատկած էր յօշոշ...  
Ու մահը դեռ երդիֆէն դուրս չէր թուր...  
Թուրֆ ոռնոցէն դողահար՝  
Մահն ալ դողաց, ֆարացալ...

Օջախ շտկեց կեանքի հարսն սգաւոր,  
Կաթսան լեցուն արցունքով՝ օջախին վրայ գետե-  
ղեց...

Փլած առֆի դարձիկներն մարմատումով այրեցան...  
Հայ մայրութեան արցունքներն կաթսային մէջ եփ  
եկան...

Ու եօթնօրեայ գոյգ մանկիկներն իբրը մատաղ նըւա-  
ցին...

\*  
\* \*

«Ու՛հ այդ նշոցն— մըռնչեց գագանութիւնը թուր-  
ֆին—

Ու՛հ, այդ նիչը, վաղի որոտն վրիժաշունչ...  
Ես հայութեան կարմիր պատանֆն եմ հիւսեր,  
Ու դեռ կեանքը կը նչայ լակոտներու կուրծֆին  
տակ...

Կեանքի հա՛րս, իժերու մա՛յր,  
Իժաճագերդ այդ վերցո՛ւր,



Որոնց նիչէն թոյն ու վրէժ կը կաթի.  
Այդ իժերը ձգնելուդ մեղքը այսօր պիտ' փախս...  
Վերցն'ըր ստոնք քու իսկ ձեռքովդ ու կաթսային  
մէջ խաշէ...  
Սաղմերն անգամ այդ իժերուն պէտք է իսպառ չը-  
փանան...  
Պիղծ գոհերը եռ ջուրով պիտ' մկրտւին...  
Այս է կամքը Մուհամմէտի Ալլահին...»

\*  
\* \*

Հայ գաւակն գոհ ու հայ մայրը գոհարար...  
Հրամանէն Ալլահին փարացած մահն սարսուց...  
.....

\*  
\* \*

Ու հայ մայրը խելագարած՝ գոյգ գառնուկներն  
եօթնօրեայ  
Իր ձեռքերով կաթսային մէջ մխրընեց, իբրը մա-  
տաղ Ալլահին,  
Ուր արցունքներն հայ մայրութեան եփ կուգար...

Բայց դեռ մուուցքն Մուհամմէտի Ալլահին չէր յա-  
գեցներ.  
Ու հրամանը դիւային անգամ մըն ալ որստաց.-  
«Սեղան շտկէ՛, կեանքի հա՛րս,

Այդ մատաղներն քու ձեռքերով մատուցն'ըր  
Իսլամութեան ամենագօր Ալլահին.  
Այս է կամքը Ալլահին...»

Սեղան շտկեց հայ մայրը իր ձեռքերով,  
Զոյգ ուլիկները իր սէրին ափսէի մէջ գիրկ-գիրկի  
Իբր մատաղ բերս կարմիր Ալլահին...

«Կե՛ր այդ միսէն, կե՛ր, անհաւատ,  
Հայ մայրերը հայ մանուկի միտով պիտի կերակ-  
րեն...»  
Հրամայեց կայծակնաշունչ ձայնն արիւնի Ալ-  
լահին...

\*  
\* \*

Դժոխքն փլաւ հայ մայրութեան գանկին վրայ...  
Ճիւղները դողացին, կարիները սառեցան,  
Քարացած մահն սարսուց...  
Ու հայ մայրը իր գաւակին խաշուած սիրտն  
Ատամներով խածոտած՝  
Իբր խելագար փոքորիկ ողջ աշխարհին կը նշայ.  
«Տեսէ՛ք, հայ մայրն իր հայ գաւակը կ'ուտէ...»



«Օ՛ն, մտրակեցե՛ք, բող կարաւանը շարժի...»  
 Հրամանը մահաշունչ բիրտ իսլամի Ալլահին  
 Թոյն լեզուովը մտրակներուն օձահիւս  
 Հայ մայրութեան ֆամակին վրայ շառաչեց...

Ու շարժեցաւ կարաւանը հայ մահապարտ մայրու-  
 քեան

Դէպի քաւրան անգերեզման մահերու,  
 Կարաւանը անայրութեան մոխիր սուգով սգաւոր,  
 Կարաւանը հայ որբութեան մղմղանքով լսելահար,  
 Կարաւանը հայ հարսնութեան հայ սաղմերով բեռ-  
 նաւոր,  
 Կարաւանը ինքնայուղարկ ջայլանքով...

Քալե՛լ, քալե՛լ կայծֆարերու վրայէն,  
 Քալե՛լ, քալե՛լ բոբիկ ոտքով վիրաւոր,  
 Քալե՛լ, քալե՛լ բուրբ ժանդարմին ճիւղոր  
 Քայլերուն հետ համաչափ...  
 Այս է վնիռն ամենագոր Ալլահին...

Ու քալեցին...

Հայ պատաները ցուպազիրկ ինկան մէյմէկ ֆարի  
 տակ,

Հոգեվարքի քառաչանքով գալարուն.

Ու քալեցին...

Հայ կոյսերը մոնկոլական պագչանքին տակ մոլա-  
 կան.

Ու քալեցին...

Հայ հարսները հայկազեան որբ սաղմերովը բեռ-  
 նաւոր,

Մինչեւ արիւն քրտրնեցան կողերն յղի, հայածին.

Ու քալեցին...

Հայ մայրերը մայրենի սէրն ստամներով խածո-  
 տած,

Մինչեւ որ մայր բագուկներէն ուժասպառ

Ու կուրծքերէն սիրասպառ,

Ամէն ֆայլի մանկիկները ընդգեղձանած սահեցան...

Ու քալեցին... քալեցին...

Ա՛յս, այս քաւրան՝ դէպ անծանօթ գերեզման...

Ա՛յս, այս քաւրան, ցուցահանդէս մահերու,

Ուր մայրն մանուկն կը մոռնայ.

Ուրկէ յիսուս հայութիւնն

Դեռ կը քալէ դէպ անծանօթ, դէպ անկայան Գող-  
 գոթա...

\*

\* \*



Մանկիկ մը դեռ եօթնամեայ,  
—Վերջին մանկիկն կարաւանին մահապարտ—  
Դեռ քառը կուգար մօրկան ձեռքէն առկախւած՝  
Գաւակն ի վար հոգեւորին ձիւտը,  
Ու պուտ մը ջուր կ'աղերսէր...  
«Ա՛խ, պուտ մը ջուր... պուտ մը ջուր...»

«Ա՛խ, պուտ մը ջուր... պուտ մը ջուր...»  
Ու մայրութիւնն անգամ մըն ալ սարսուաց,  
Ու մայրութիւնն անգամ մըն ալ արտասուեց...  
Քամեց կռպէն վերջին կաթիլն արցունքի,  
Սրբեց կաթիլ մ'արիւն-քրտինք մակատէն...  
Հայ մայրութեան արցունք-քրտինքն իբր քաղցր  
Հայ մանկութեան յիսուսութիւնն դեռ չըմպած  
«Ա՛խ, պուտ մը ջուր...»  
Կողկողանք մանկունակ  
Թուրք Ալլահի ծիծաղին տակ մարեցաւ...

Ու կարաւանն քեքեցաւ...  
Ալ ո՛չ ծերուկ, ո՛չ մանուկ...  
Ուժատ, նօթի, ծարաւահար մէկիկ-մէկիկ քափե-  
ցան  
Քարերու տակ, փոսերումէջ նոր մահերով քալքը-  
լուն,  
Իբր ողջակէզ թուրք Ալլահին մահախանձ...

Ու դեռ քալեց...  
Ու դեռ քալեց կարաւանը մահապարտ,  
Կարաւանը շամբուշ, անքեռ ու քեքեռ,  
Երբ սողմերն հայ յղութեան  
Կաթիլ կաթիլ արիւնեցան, ծորեցան...

—«Պէյ էֆէնտի, վերն Ասուած կայ,  
Ննայեցէ՛ք ծննդաբեր կիներուն  
Թողէ՛ք, պակիկն...»  
—Պակիկն... հա՛... հա՛...  
Թառաջանքն հայ երկունքունքին ողորմուկ  
Նեղղըւեցաւ լիահագագ քրքիչին մէջ մանկուիկն...  
—Պակիկն... հա՛... հա՛...  
Ոնրախանձ միտքն Ալլահին անգամ մըն ալ կարմ-  
րեցաւ...

Ու ջուրեցան, ու պակեցան յղութիւնով ոնրապարտ  
Կեւվուր հարսները բոլոր...

Ու որոտաց ձայնն իսլամի Ալլահին.  
«Պակեցուցէ՛ք...  
Ես մահերէն հնաձեռ ա՛լ ձանձրացայ.  
Ինձ նոր ջալիանք սարքեցէ՛ք...  
Պակեցուցէ՛ք հարսներն բոլոր հայ սողմերով յը-  
ղացած,  
Ու բանակիս նժոյգներու սմբակներուն տակ հայ  
արգանդն թող քալէ  
Իր ոնիրը յղութեան...  
Հոս կեւվուրի չորս աղջիկ կան ձեզ ընծայ,  
Հոն քառասուն հուրի-մէլէկ երկնային,  
Ով որ կրնայ չորս սմբակով չորս յղի պորտ փեռեկ-  
տել...»

. . . . .

2620-2011





III

Ալլահ 'ւ էֆպէր, Ալլահ 'ւ էֆպէր...  
Մեծ ես, մեծ եղիք, Ալլահ յախտեան...  
Արիւնի տօնէդ ներս մտայ ուխտով,  
Ուխտս կատարեցի եօթը մատաղով,  
Ուխտըս՝ արժանի իսլամ անունիդ.  
Ու դուն անսպառ ուժ տրւիր բազկիս, սուր տըւիր  
քուրիս,  
Ու ես մեծութեանդ մատուցի անոնք...

Լսէ՛, Տէ՛ր, դուն որ լսող ես բոլոր հա՛տացեալնե-  
րուդ,  
Որ գինիի տեղ կեալուրի արիւնն հէլլալ ըրիր մեզ.  
Լսէ՛ ինձ, Ալլա՛հ,  
Արիւնի տօնըդ այսպէս տօնեցի.-

Եօթ լակոտ ունէր այն ֆաճն անհաւատ,  
Եօթը վագրի ձագ, որ իբր եօթ ուլիք,  
Քու մեծութեանըդ մատաղ կտրեցի...

«Տա՛ր, տա՛ր—կ'աղերսէր մայր վագրը լալով—  
Տա՛ր, քեզի ըլլան, մինակ խնայէ՛ անոնց կեանքե-  
րուն...»

Տա՛ր, քեզի ըլլան, տա՛ր, իսլամացո՛ւր,  
Մինակ քէ սպրին, քո՛ղ իսլամ սպրին...»

\* \* \*

Սիրտըս քու փառփիղ ուխտ էի ըրեր.  
Հոն անհաւատի արիւնով գինով ոգիդ կը տիրէր...  
Կեալուր մայրի ողբն փեսայութեանքս ֆաղցր երգն  
էր կարծես,  
Երբ հարսնետունիս սեմին վրայ ուլ մը կը մորթւէր...  
Ու առաջինի գլխին կոն ըրի ծունկը մայրական...  
Պիս միլա՛հ...  
Արիւնը պոռփկաց, շատըրանի պէս,  
Փաթթոցիս ու մօր մագերուն վրայ...  
Ալ չխօսեցաւ անհաւատ ֆաճը...

\* \* \*

Ալլահ 'ւ էֆպէր, Ալլահ 'ւ էֆպէր...  
Երկրորդն ինկած՝ ոտքս կը համբուրէր:  
Ոտքերս լըւացի հայի արցունքով,  
Ոտքերս սրբեցի հայի համբոյրով...  
—Ապտեստս ընդունակ—  
Արցունքը հատաւ. ան արիւն լացաւ.  
Արիւնն ալ հատաւ. շունչն սպտեցաւ...



Ա՛յ փըռւած էր ան կիսամեռ դիակ...  
Տէ՛ր, պարտք ունէի՜ քու կամփիդ տալիք,  
Ու ուխտս խոշոր քար մը դրբաւ ձեռքս:  
Լեզուն դուրս ճըգած՝ այլեւս օձի պէս լեզուով կ'ա-  
ղերսէր,  
Ու աչքերուն մէջ սառած հայեացքը ձեռքիս էր  
գամուտը...  
Քու մեծութեանդ զոհ մըն ալ, Ալլահ...  
Այդ հայեացքն արին տակ քաղեցի ես,  
Ու մօր նայածքը արին գամեցի...

\* \* \*

Ալլահ 'ւ էփպէր, Ալլահ 'ւ էփպէր...  
Շուրքերս արիւնի համն առին, ո՛վ Տէր...  
—Ո՛հ, քաղցրութիւնը կեանքս արիւնիս—  
Ակին հակեցայ, կ'ուզեմ ծովն խմել...

Երբորդ մատաղըդ տասնչորս տարեկան աղջիկն էր  
անոր.  
Աղջիկ չէր ան, այլ հուրի խոստացւած,  
Որի արցունքին մէջ կիրքս կը փրփրէր...  
Ալլահ մեծագօր,  
Դուն խոստացեր ես քառասուն հուրի.  
Ես անոնց հաշիւն՝ մէկն այս սեպեցի...

Բայց ան էգ վագրի պէս երեսս ցատկեց...  
Փա՛նք քու գորութեանդ, փառք անյաղք ուժիդ...  
Ու ես մօրը գիրկն անկողին ըրի...  
. . . . .  
Իսլամի կիրքըդ կիրքովս յագեցաւ...  
Պարտք ունէի, Տէ՛ր, քու կամփիդ տալիք,  
Անոր ծիծերէն խորտիկ շինեցի,  
Կաքի ակերէն արիւն կքեցի, պորտէն խմեցի...

\* \* \*

Ալլահ 'ւ էփպէր, Ալլահ 'ւ էփպէր...  
Չորրորդը եօթը տարեկան տղայ՝  
Գարունի խեռ ուլ քեզի մատաղցու...  
Իր ճիշերէն, Տէ՛ր, ալլահանըւէր սիրտըս կատղե-  
ցաւ:  
Քեզ ուխտ եմ տըւեր ամէն մատաղի նոր ուխտ կա-  
տարել...  
Ու գանկըդ, Ալլահ, գանկիս մէջ կայծեց  
Արիւնի տօնիդ նոր ջահ մը վառել:  
Միւռոնով պղծւած մարմինն քարիւղով մաքրօծե-  
ծեցի, Տէր...  
. . . . .  
Հա՛... հա՛... ի՛նչ հրաշք...  
Բոց մը կը վազէ. բոց մը կը պարէ, բոց մը կը խօսի...  
Կեանքս մարմինը ի՛նչ բոցեղ կ'այրի,  
Ծիածանի եօթ-գոյն բոցով կ'այրի...

\* \* \*



Ալլահ 'ւ էֆպէր, Ալլահ 'ւ էֆպէր...  
Փա՛ռֆ հօր կամֆիդ, որ շուներու իսկ բերնով յայտ-  
նեցիր...

Սուրս բարձրացուցի հինգերորդին վրայ իմ մատաղ-  
ներուս,

Ու գոհարանիս դուռին վրայ շուներ  
Սուր կաղկանձինով քու կամֆդ յայտնեցին...

Լսեցի՛, Ալլա՛հ, անոնց կաղկանձին մէջ լացն պա-  
պերուս,

Որ մեռան գացին ու չարժանացան քու այս մեծ  
տօնին...

Ու կաղկանձեցին, ու աղերսեցին,  
Յանուն անունիդ, յանուն քու փառֆիդ,

Յանուն հոգիին արինաճարաւ իսլամ պապերուս,  
Իրենց առամներն քեզ մատուցանել...

Ու ես մանրեցի, մանրեցի քեւերն, ոտքերն ու ի-  
րանն հինգերորդ գոհիս,

Ու իմ պապերըս նօթի շուներու մէջ տօնդ տօնեցին  
Կեավուրի միտով ու ոսկորներով...

\* \* \*

Ալլահ 'ւ էֆպէր, Ալլահ 'ւ էֆպէր...

Ա՛լ սուրբս գուլցաւ: Դաշոյնիս պողպատն սարսը-  
ռաց մէջֆիս...

Ո՛վ դուն մեծագօր Ալլահ պապերուս,  
Դուն պողպատ տըւիր. մեղֆ սահմանեցիր  
Կեավուրի արիւն չտեսած պողպատ կրող միւսլի-  
մին...

Դաշոյնս դեռ նոր էր,

Լոկ ջուրով մխուած, արիւն չտեսած...

Ու վեցերորդը մատղաշ գոհերուս

Զոհասեղանիդ վրան էր արդէն դաշոյնիս պատ-  
րաստ...

Ո՛վ հօրուքիւնն իսլամ դաշոյնին...

Մէկ հարւած միայն

Դաշոյնիս պողպատն կուրծֆէն կոնակը չափեց մա-  
տաղիս,

Ու գոհարանիդ սեղանին վրայ փառֆդ արինագը-  
րեց...

\* \* \*



Ալլահ 'ւ էֆպէր, Ալլահ 'ւ էֆպէր...  
Ու եօթերորդը՝ վերջինն, մանկիկն էր եօթը ամսա-  
կան...

Ա՛յ յոգնած էի, բազուկս՝ ուժասպառ...  
Մատղաշագոյնն էր, սակայն, այդ ուլիկն:

Դուն, հօր Ալլահն սուրբ Մուհամմէտի,  
Մատաղ ուզեցիր.

Ու ես, ուխտաւոր քու հօր կամֆին,  
Մատղաշագոյնովն իմ մատաղներուս քու փառքդ  
տօնեցի...

Քու կամֆիդ, ուժիդ անունով, Ալլահ, հ,  
Հրամայեցի կեանքդ մօրն իր իսկ մայրենի մա-  
գով օղակ մը հիւսել,

Օղակ մը ծծկեր մանուկի վիզին...

Մայրն չլսօսեցաւ...

Մօր մատերուն մէջ պուլակներն մագի

Սեւ օձերու պէս դարձան ու դարձան,

Ու ծածկեցաւ դէմքն մագերով ցանցիր...

Ան մայր մահն էր, Տէ՛ր...

Ու քնջուֆները մայրական մագի

Մանուկի վիզին շուրջ պրկըւեցան...

. . . . .

Փառք ասուածներու ասուածի կամֆին...

Ալլահ 'ւ էֆպէր, Ալլահ 'ւ էֆպէր...

IV

Մուժ ու մշուշ Մուշն ալ պատեց.  
Մուժ արիւնի, մշուշ մահի...

Թուրք Ալլահի կրակ լեզուն  
Հայ աշխարհի չորս ծագերէն երկարեցա՛ւ,  
Երկարեցա՛ւ, շուրջանակեց,  
Ու դաշտերէն արիւնոտօգ, խարուկավառ  
Եկաւ, հասաւ Մուշի դուռերն հերոսական...

Մուժ ու մշուշ Մուշն ալ պատեց  
Մուժ արիւնի, մշուշ մահի...

Ու Մուշն անուշ

—Արիւն լինի եղբրական մէկ սուրբ կղզի—

Թուրք Ալլահին իբր դահամունք

Արիւնին մէջ դիւցազնական իր պատիւը քաղեց ան-  
պիղծ...

Ու բուրգերովն հայ գանկերու

Անգօրութեան հուր գայրոյթին ասուածութիւնն  
յուշարձանեց.

Ու անէծֆի սեւ գիրերով տապանագիրը գրեցաւ

Հայ մեղկացած հին Ասուածի.



Ու դիակի խարոյկներով հայ Աստուածի տանարները,  
Թուրք Ալլահի մզկիթները հրդեհեցան...  
Գերաստուածեան ո՛վ պոռկոււմը հայ յուսահատ անգորութեան...

\*  
\* \*

Ու հրամանը Ալլահին  
Բորենածին թուրք խուժանի գոչ ու գանչով  
Դեռ կը բաղխէր հայ գայրոյթի անգորութեան պարիսպներուն...

Այդ բերդն վերջին—Տիգրանի տունն  
Այդ բերդը հայ օրահատող դիւցազնութեան  
Դեռ կը մերժէր ժպրհանձնովն սուրբ ու վսեմ՝  
Մահավնիռն բիրտ Ալլահի...

Ու Տիգրանը, երկունքի մէջ աստուածածին,  
Անգորութեան գայրոյթովը դիւցազնական,  
Նոր հայ վահագնը կը ծնէր...

Մուժ ու մշուշ...

Մուժ արիւնի, մշուշ մահի...

Դուրսն՝ տուշմանին, ներսը՝ մահերն ազիզներուն...

Ու Տիգրանը մահ կը համբէր...

Դուրսն տուշմանին, ներսը մահերն ազիզներուն...

«Խմե՛լ...»

Հրամանն էր

Հայ պարտութեան դիւցազնական ու յաղթական...  
«Խմե՛լ...»

Ու յուսահատ դիւցազնութեան վերջին զենքը  
—Թոյնի բաժակը մահալի—

Հայ շրթունքին շրթունք տրւաւ...

Նահատակի վերջին սեղան...  
Եօթանասուն հայ մատաղներ...

Հանին թռուիկը եօթնօրեայ գրկած կուրծքին,  
Քոյր ու եղբայր փարած իրար,  
Պսպ ու մամիկ գլուխ-գլխի...  
Մահի գիրկը կը նիրհէին...

«Խըմէ՛, բալաս, իմ բալա-ջան, մատաղ քեզի...  
—Կողկողաց հայ վերջին հարսը սէրի պտուղին անդրանիկ—

Խըմէ՛ բալաս, իմ բալա-ջան...

Ան քուն կուտայ աչուկներուդ,

Որ աչուկներդ ալ չտեսնեն քիւրտ ու թուրքին սեւերսը...

Խըմէ՛ բալաս, ա՛խ, քեզ մատաղ...

Քիւրտը անա կուգայ շուտով, խըմէ՛ բալաս...

Տե՛ս աղբարիկդ, տե՛ս քոյրիկդդ, տե՛ս մամիկը,

Տես պապիկը, բոլորն ի՛նչպէս կը քնանան...

Խըմէ՛... բալա՛ս...»

Ու հայ մայրը թոյնի բաժակն դրբաւ շուրթին իր բալային,

Խմցուց մահը իր բալային...

Խմեց ինքն ալ մահն իր ձեռքով...

Ու աղօթեց վերջին աղօթքն հայ մայրութեան, աղօթքը թոյն.

—«Ա՛խ, այս գուլումն ո՛վ է տեսեր.

Հայ մօր գլխին մաղւած ձիւնը ո՛ր լեռ տեսեր...»

\* \* \*



Մէկ հայ երգիիք, ա՛խ, եօթանասուն հայ մատաղ-  
ներ...

—Ողջակէզի ի՛նչ գոհարան—

Ու Տիգրանը պատարագւոր՝

Տըւաւ կըրակը խարոյկին...

Ու իր վերջին փամփուշտը սուրբ՝ գանկին մէջ վեհ  
երկրպագեց նոր ասուածեան այդ տանարին...

Մուշն ալ պատեց մուժ ու մշուշ...

Արիւնի մուժ, մահի մշուշ...

V

«Ես եօթը էրիկ ունիմ... դուն քանի՞...»  
Այսպէս կը խօսի հայ հարսը հարսին, հայ քոյրը  
քոյրին փողոցաբընակ...

Ո՛հ, խելաւեր է հայ իգութեան սուրբ պարկեշտու-  
թիւնը...

Ու մայրութիւնը, ու հարսնութիւնը, ու կուսութիւ-  
նը հայկեան աշխարհին

Քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ, սարէ սար ու լեռնէ  
լեռ...

Արար աշխարհին արձագանգ կուտայ.

—«Ես... եօթանասուն...»

\* \* \*

Հրապարակը իսլամ քաղաքին,  
Ուր գաւուրմացու ոչխարներու հօտն երբեմն կը  
բերէր վանաւփի համար,

Դիւարնակ կայանն էր անպատ, անդուռ, ..  
Ուր կարաւանը որք՝ հայ կիներուն  
Խարագանին տակ իսլամ ժանդարմին

Ամբողջ գիշերը քալած էր անհուն, ուժատ, պար-  
տասուն,

Ու եկած, հասած այս լուսադէմին...



Ալլահն այս առտու նոր կարմիրով մը կը բանար  
աչքերն հայ տանջանքին վրայ,  
(Ալլահի աչքն միշտ կարմիր է վառեր, այն օրէն  
երբ հայ Աստուածն է կուրցեր,)  
Ու միւէգգիւնը մայր մինարէի կատարէն խրոխտ ալ-  
լահանըւէր էգանը կ'երգէր,  
Որ սուրբ միւսիմներ գան տօն կատարել կեալուր  
կիներու մերկութեան վրայ...

Մզկիթն այս առտու հրապարակն էր.  
Ու միւէգգիւնը իր նոր աղօթքը այսպէս կը սկսէր.  
—«Ով Մուհամմէտի հաւատացեալներ,  
Ձեզ, որ քառասուն հուրի խոստացւած է Մարգա-  
րէէն,  
Ահա ձեզ կեալուր հուրիներ, որոնց տէրն էք բացար-  
ձակ...  
Ահա ձեզ կիներ, հարսներ, աղջիկներ պիղծ կեա-  
լուրներու,  
Ահա ձեզ անոնք, որոնց դուռը դուք ծառաներ էիք  
ու ձեր կիները աղախին էին,  
Ահա ձեզ անոնք, որոնց փէշերուն դուք չէիք հասնիր,  
Ահա ձեզ անոնք, կեալուրիստանի ամէն կողմերէն,  
Ահա ձեզ անոնք, երեսները բաց ու անգլխանոց,  
Կուրծքերն գինիի տակառներ լեցուն իբր ընծայ  
ձեր իսլամ կիրքերուն,  
Ձեր հաւատին իբր վարձք՝ Ալլահներու Ալլահէն  
հօր, Մարգարէներու Մարգարէէն  
սուրբ...»

Ու փրփրեցաւ իսլամ պագշանքը շրթունքներուն  
շուրջ,  
Ու թուրքի հոգին կաղկանձեց աղօթքը երախտա-  
գէտ.  
—«Ալլահ 'ը էքպէր Ալլահ, Մուհամմէտը րէտու  
ուլլահ...»

\* \* \*

Ահա առաջինն.  
Հայ գեղուհի մը եւ մէկ մէհիտի...  
Էրգումէն է:  
Արտերը բուսած, սարերու պաղ պաղ ակերէն խմած,  
Երեսներն խնձոր, կուրծքերը շամամ...  
Ո՞վ է քաջ իսլամն, որ այս վայրի այծն կրնայ յա-  
գեցնել...  
Մէկ մէհիտ... Հառաչ... մէկ մէհիտ... մէկգաթ...

Ահա երկրորդն.  
Վասպուրականցի...  
Ֆէտայի աղջիկ, էջգըյա կ'ուզէ...  
Եօքը քաջ կուրծքի հրաւեր ունի իր կուրծքն անխոր-  
տակ...  
Ո՞վ է կտրիւնը, որի կուրծքին տակ եօքն հայ աղջիկի  
կուրծք է ջախջախեր...  
Օ՞ն, Հառաչ, մէկգաթ...



Ահա երոբորդը .  
Բաղէշէն կուգայ . Սասունի, Մուշի սարերէն բըռ-  
նըւած կախաւ մը վայրի . . .

Որսորդ կը փնտռէ ,  
Որսորդ , որ կրնայ ֆէտայիի պէս սարերն մագլցիլ ,  
Որսորդ , որ գիտէ համն հայ կախաւի . . .  
Ո՞վ է քաջ որսորդն , անոր արժանի . . .  
Օ՛ն , *Հառաչ մէղաթ* . . .

Ահա չորբորդը .  
Սվազի անծայր դաշտերուն արժան ազդրեր ունի . . .  
Հարուստի աղջիկ , որ Ալլահն ձեզի ուտով է բերեր . . .  
Նոր են հագուստներն , նոր՝ կօշիկները ,  
Հագուստին գինը տըւողինն է ան . . .  
Լաքերն դրամով , մարմինը ձրի . . .  
Դէ՛հ , *Հառաչ , մէղաթ* . . .

Ահա հինգերորդն ,  
հարբերդցի հարս մը .  
Սմէն այգիէ խաղող է կթեր , գինի պատրաստեր .  
Գինի այն քաջին , որ հայ ծիծերէ հեշտանք խմելու  
շրթունքներ ունի . . .  
Հարս մը ահա ձեզ , որի ծիծերէն հայ երեխայ մը  
դեռ կաք չէ ծծեր . . .  
Ո՞վ է *Հովարտան* այս գեղեցիկի մարմնին արժանի . . .  
Ո՞վ . . . *Հառաչ , մէղաթ* . . .

Ահա վեցերորդն .  
Տիգրանակերտէն  
Պարիսպ քաղաքէն , ուր պարիսպ մը կայ կեանք  
հարսին շուրջ . . .  
Արեւ չտեսած գեղեցիկն ահա . . .  
Պարիսպ բազուկներ ո՞ր քաջը ունի , քող առաջ  
անցնի ,  
Քատորդ մէնիտի . . .  
Օ՛ն , *Հառաչ , մէղաթ* . . .

Ահա եօթերորդն .  
Կիլիկիայէն .  
Առողջ ու բերրի ինչպէս արտերն են Կիլիկիայի ,  
Բարձր ու հպարտ ինչպէս լեռներն են Կիլիկիայի ,  
Ծիծերու մէջէն անմահ հեշտանքի Սիւնուր կ'անցնի . . .  
Ո՞վ է կտրինը , որ գինը գիտէ այս գեղեցիկին . . .  
Ո՞վ . . . *Հառաչ , մէղաթ* . . .

\*

\* \*

Ու գեղեցիկներն Հայկեան աշխարհին մէկ մէկ ծախ-  
ւեցան ,  
Ծախւեցան անոնք մէկ-մէկ մէնիտով , քատորդ մէ-  
նիտով ու լաքին գինով . . .

Անուրդն վերջացաւ . . .  
Ու այն կիները , ու այն հարսները ու աղջիկները ,  
Որոնք չարժեցին նոյնիսկ լաքի գինն ,  
Անդուռ , աներդիկ հրապարակը մզկիթի կողքին ,  
Պառկեցան խելաւ . . .  
. . . . .



Ու հայ կնութեան պարկեշտութիւնը խելառ, դի-  
ւահար,  
Փողոցներուն մէջ, ա՛հ, կը զառանցէ.  
—«Ես եօթը էրիկ ունիմ... դուն քանի՞...»  
Ու մայրութիւնը, ու հարսնութիւնը, ու կուսու-  
թիւնը Հայկեան աշխարհին  
Արար աշխարհին արձագանգ կուտայ.  
—«Ես... եօթանասուն...»

## VI

Ճամբային վըրայ, քանդուած բանտէն դէպի աղբա-  
նոց,  
Աղբի հին կառք մը անհուններով լի  
Կը քաշէ կաղ ձին ծեր մուսանիւրին...

Ու կը մ'իսան դեռ գանկերն կիսախանձ,  
Որոնց տակ երէկ ազատ ապրելու հուրը կը վառէր,  
Ու կը մ'իսան դեռ սրունքներն այրած,  
Որոնք քալեցին անխոնջ, աննկուն՝ Ազատութեան  
սեպ, արիւնոտ ցամբան.  
Ու կը մ'իսան դեռ բազուկներն սեւցած,  
Որոնք բռնութեան ժանտ Հիդրային դէմ սուր բարձ-  
րացուցին.

Ու կը մ'իսան դեռ իրաններն անմիս,  
Որոնք կուրծք տըւին վատ նիզակներու...  
Ու կը մ'իսան դեռ անհուններն անոնց,  
Որ խարոյկ եղան հայ ստրկութեան,  
Ու ջահ մը անշէջ հայ հերոսութեան...



Ճամբային վերայ, փլատակ բանտէն դէպի աղբա-  
նոց,

Կ'երթայ կառքն աղբի.

—Բանտը գոհարան, աղբնոցն գերեզման—

Ու նեններահոտ ծուխերն կը պատմեն արար աշ-  
խարհին

Պատմութիւն մը, որ մարդն է ստեղծեր...

—«Դէպի բանտ, ով որ երիտասարդ է.

Դէպի անապատ, ծեր ու երախայ, կին, հարս ու  
աղջիկ...»

Հրամանն էր անդարձ...

Դէպի անապատ անտէր թափօրը գնաց արցունքով,  
կուրցած աչքերով.

Ու ամէն գիշեր բանտէն մահաբոյն նոր հարիւրակ-  
ներ

Թեւ թեւի կապւած՝ գացին անկայան, անծայր  
նամբայէն.

Գացին ա՛յ չեկան...

Գացին գիշերով ու մեկնողներուն գիշերն չլուս-  
ցաւ.

Վերջինը մնաց հարիւրակներուն.

—Տանջապարտներուն առաջինը ու մահապարտնե-  
րուն վերջին հարիւրակն—

Կարօն ալ մէկն էր—վանդակւած առիւծն ու մա-  
հապարտը,

Որի սարսափը դեռ երէկ տէրն էր ամէն թաթարի ու  
թուրքի սիրտի, կովկասէն Խարբերդ—

Կարօն ալ. այսօր վանդակւած առիւծ...

Վերջին իրկունն էր...

Գիշերն աստնի ալ կապւած թեւ թեւի պիտի քա-  
լէին մութ, անհանգրւան նամբայէն ան-  
դարձ,

Ուրկէ գացողներն ալ ետ չդարձան,

Ուրկէ իրենի ալ պիտի երթային ու չդառնային...

Վերջին իրկունն էր...

Հրամանն էր անդարձ...

«Տղա՛ք, ընկերներ՛ք, կռիւի եղբայր ու մահի եղ-  
բայր, հայ կտրբիներ՛ք...

—Դէմ առ դէմ մահին, բանտի չորս պատին զար-  
կաւ կարօին ձայնը պողպատէ,

Ինչպէս երբեմբն քշնամիին դէմ արիւնամարտին՝  
իբր հրամանատար հայ ֆէդայիին—

Տղա՛ք, ընկերներ՛ք,

Նախատօնակն է մեծ պատարագի,

Նախատօնակը, ուր հերոսները իբր կերտներ  
պէտք է որ այրին,

Պէտք է որ այրին, բոցավառելու վաղի պատա-  
րագն...

Զոհեր շատ առաւ Ալլահն արիւնխում,

Մենք հերոս գոհեր վահագնանքէր

Մեծ պատարագի նոր խարոյկ սարքենք,

Ու թող աշխարհը այս խարոյկին մէջ

Ստորուկ հայ Աստուածն ու թուրք Ալլահը խարուկ-  
ւած տեսնէ...»



Դուրսը բանտին դուռն ու պատերուն տակ  
Կը յեսանէին հայ վիզերու վրայ գուլցած սուրբ-  
րերը,  
Կը սրբըւէին ու կը սրւէին հայ արիւններէ ժանգոտ  
դաշոյններն,  
Ու կը գծւէին մահի նոր ձեւեր քաջ հարիւրակին  
համար այս վերջին...  
Ներսն Ազատութեան հեթանոս քաջեր  
—Վահագնեան ֆուրմեր—մեծ պատարագի մեծ նա-  
խատօնակը կը սարքէին...

Բանտի պատերէն, պատուհաններէն, սեւ առիֆնե-  
րէն  
Կախեցին լաթեր, աստառ ու ֆուրջեր.  
Քակեցին վերմակ, անկողին ու բարձ,  
Չոր խոտերուն հետ դիզեցին բամբակն ու բուրդը  
մէջտեղ.  
Կախեցին սիւներն ի վար հագուստներ,  
Տախտակներու տակ ու հասակն ի վեր մուտքի մեծ  
դուռին դըրին շապիկներն...  
Ու... մերկացան...  
Նոր տանար էր բանտն մեծ պատարագի,  
Ու բանտարկեալներն մերկ պատարագիչ՝  
Վահագնանըւէր վեհ մեհեանին մէջ...  
Ու մերկ... մօրէ մերկ,  
Օծւեցան հերոս ֆուրմերն ֆարիւղով...  
.....

—«Հազը՛ր» մոնչեց հրամանն դուրսէն,  
—«Պատրա՛ստ» որոտաց արձագանգն ներսէն...  
Ու ծածկեց ծուխը անցեալն խարբերդի.  
Ու փառագայթեց բոցը ապագան...  
.....



Համբային վըրայ մխացող բանտէն դէպի աղբանոց,  
Աղբի հին կառք մը անիւններով լի  
Կը քաշէ կաղ ձին ծեր մուսանիքին...  
—Բանտը գոհարան, աղբնոցն գերեզման—  
Ու նեմներահոտ ծուխերն կը պատմեն արար աշ-  
խարհին  
Պատմութիւն մը, որ մարդն է ստեղծեր...





ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1.- Շանքեր (Սպառած)	15c
2.- Ամպեր (Սպառած)	25c.
3.- Օրէնքի եւ Ընկերութեան Զոհերէն	25c.
4.- Քաւութեան Երգեր	10c.
5.- Մարդը	25c.
6.- Աշխարհի Յեղափոխութիւնները (Թրքմ.)	25c.
7.- Սէրի եւ Ատելութեան Երգեր	\$1.00
8.- «Կարգաւոր Հայրեր»	25c.
9.- Վրէժի Աւետարան (Գիրք Ա.)	25c.




















« Ազգային գրադարան  
  
NL0374552



45611